

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆԿՄԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Նոր փաստերի ու վկայությունների լույսի ներքո*

Հայ-ռուսական և ռուս-ադրբեջանական հարաբերություններում արձանագրված վերջին զարգացումները խիստ արդիական են դարձնում 1991-1992 թթ. ռազմական գործողությունների արդյունքում Հյուսիսային Արցախի հայկական տարածքների ու մանավանդ Շահումյանի շրջանի կորստյան պատմությունը: Շուշիի և Լաչինի 1992 թ. մայիսյան փայլուն գործողություններին հետևած՝ Շահումյանի անկման խորքային պատճառների բացահայտումն անհրաժեշտ է նման ողբերգությունը բացատրելու համար:

Սույն հոդվածով կփորձենք ներկայացնել Շահումյանի անկմանը վերաբերող այն նոր փաստերն ու վկայությունները, որոնք Արցախյան պատերազմին հաջորդած ժամանակամիջոցում տեղեկատվական դաշտ են բերվել նրա ինչպես հայ, այնպես էլ ադրբեջանցի մասնակիցների ու ժամանակակիցների կողմից:

Հայտնի է, որ դեռևս 1991 թ. գարնանը՝ «Օղակ» գործողության ընթացքում, հայաթափվեց Գետաշենի ենթաշրջանը: Այս առիթով վերջերս «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայությանը տված իր հարցազրույցում հետաքրքիր փաստեր է հրապարակել Ադրբեջանի նախկին նախագահ Ա. Մութալիբովը¹: Դրանցից ակնհայտ է դառնում, որ Գետաշենի հայաթափման ծրագիրը հնարավոր է եղել կյանքի կոչել՝ օգտվելով ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17-ի համամիութենական հանրաքվեի հանդեպ Հայաստանի ղեկավարության բացասական դիրքորոշումից: Մասնակցելով այդ պատմականորեն դատապարտված միջոցառմանը՝ Ադրբեջանի ղեկավարությունը կարողացել է կյանքի կոչել «հայ գրոհայիններից» Հյուսիսային Արցախը «մաքրելու» մասին Մ. Գորբաչովի հրամանագիրը, որը և գործի է դրվել 1991-ի ապրիլին: Տվյալ փաստաթղթի գոյության մասին իմացել են նաև Հայաստանի իշխանությունները, սակայն, լծված լինելով ԽՍՀՄ-ի փլուզման կողմնակիցների ելցինյան ճամբարին, ակնհայտորեն անտեսել են վտանգի առկայությունը:

Հիշեցնենք, որ ժամանակին Հայաստանի ընդդիմադիր ուժերը և առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցությունը նախագգուշացնում էին փլուզվող կայսրության հետ առձակատման գնալու վտանգավոր հետևանքների մասին, բայց արժանանում էին Հայաստանի անկախությանն իբր դեմ լինելու հիմնազուրկ զրպարտությանը: Ուստի չի կարելի շրջանցել Ա. Մութալիբովի հարցազրույցում առկա այն դիտարկումը, որ 1991 թ. հանրաքվեն «...

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.08.2013:

1Տե՛ս **Аяз Муталибов**: Я просил Горбачева очистить Карабах от армянских разбойников- radioazadlyg.org: Տե՛ս նաև՝ www.regnum.ru/news/fd_abroad/armenia/1636201.html 14.03.2013

իրենից որևէ նշանակություն չէր ներկայացնում, ԽՍՀՄ-ը փլուզվում էր. և փլուզվելու էր: Դրանից հարկավոր էր օգտվել²»:

Մ. Գորբաչովի հետ քաղաքական առևտրում նժարի վրա դնելով հանրաքվեին Ադրբեջանի մասնակցության փաստը՝ Ա. Մուխալիբովը պնդել է. «...այդ փաստաթուղթն իր գինն ունի: Նա հարցրեց ինչպիսիք: Ես պատասխանեցի, որ Դուք կարգադրություն ունեք, որը չի կատարվում: Մաքրեք Ղարաբաղը: Ապրիլին Ադրբեջանում տեղակայված ռազմական միավորները Ադրբեջանի ՆԳՆ ՕՄՈՆ-ի հետ միասին ավազակներից մաքրեցին 24 գյուղեր³»:

Այսպիսով՝ Գետաշենի անկումը և Արցախի այլ գյուղերի հայաթափումը եղել է Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորած Հայաստանի նոր իշխանությունների հանցավոր «անփորձության» արդյունքը: Սակայն դա ողջ Հյուսիսային Արցախի հայաթափմանը հանգեցրած ռդբերգական իրադարձությունների սկիզբն էր միայն, որովհետև 1992 թ. գարնանը արձանագրված հաղթանակները և նրանց փառապսակը դարձած Շուշիի ազատագրումը հաջողության նժարը կրկին թեքել էին հայկական ուժերի կողմը: Ավելին՝ 1992 թ. մայիսին Ադրբեջանում իշխանության էր եկել Ժողովրդական ճակատի ներկայացուցիչ Ա. Էլչիրեյը, որը Թուրքիայի հետ հարաբերությունների խորացման հետևողական կողմնակից էր:

Չնայած դրան՝ դեռևս Ա. Մուխալիբովի իշխանության օրոք՝ 1991 թ. սեպտեմբերին, երբ Ռուսաստանի և Ղազախստանի միջնորդությամբ Ղարաբաղյան հակամարտության փոխզիջումային կարգավորման փորձեր էին արվում, ստորագրվեց Ժելեզնովոդսկյան կոմյունիկեն, որով Հյուսիսային Արցախի ձակատագիրը Ռուսաստանի և Ադրբեջանի կողմից դրվեց քաղաքական առևտրի գոհասեղանին: Դեռևս Ժելեզնովոդսկյան հանդիպումների ժամանակ խոսակցություններ էին պտտվում, որ Շահումյանը պարտվել է, որի պատճառը Ելցին-Նազարբաև-Մուխալիբով-Տեր-Պետրոսյան բանակցություններն են: Դրանց հիմքում ընկած էր այսպես կոչված՝ «Շուշի-Շահումյան» փոխանակման ծրագիրը, որի գոյության մասին շուկները համառորեն հիշեցնում էին իրենց մասին:

Ժամանակին այս հանդիպումների ճշգրիտ գնահատականը տվեց Շահումյանի շրջանի ղեկավար Շահեն Մեղրյանը: Վերջինս դեռևս 1991 թ. սեպտեմբերի 30-ին դիմում հղեց Ելցինին, Նազարբաևին ու Տեր-Պետրոսյանին՝ նշելով, որ «ստորագրված փաստաթուղթը ոչ մի լավ բան չի խոստանում»⁴: Ավելին, գիտակցելով մոտեցող վտանգը՝ Շ.Մեղրյանը 1992 թ. փետրվարին «Ազատամարտ» շաբաթաթերթին տված հարցազրույցում պարզաբանում էր. «Եթե թշնամին համոզված է, որ Շահումյանի վրա մեծ ուժեր նետելով Մարտակերտից հակահարված չի ստանա, դա մեծ վնաս կլինի մեզ համար: Մեր ռազմավարությունը ողջ Արցախում պետք է միասնական լինի: Միայն այն էր, որ Գետաշենում լիարժեք կռիվ չտվեցինք և հանձնեցինք առանց կռիվի»⁵: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Շ.Մեղրյանը կանխագուշակել էր Շահումյանի սենսակ մնալու

2 Նույն տեղում:

3 www.regnum.ru/news/fd-abroad/armenia/1636201.html 20:00 14.03.2013.

4 «Երկիր», Եր., 5 հոկտեմբերի, 1991 թ.:

5 «Ազատամարտ», Եր., փետրվար, 1992թ., N 6:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

Ե (ԺԵ) քաղթ, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

տարբերակը: Իսկապես, քիչ անց Շահումյանն անկում ապրեց ոչ միայն ԼՂՀ տարածքից, այլև Հայաստանից նման հակահարվածի բացակայության պատճառով:

Իսկ ինչ մնում է թրքամետի համարում ունեցող Աբուլֆազ Էլչիբեյի իշխանության և Ռուսաստանի ղեկավարության միջև սկիզբ առած տարածայնություններին, ապա ինչպես ցույց են տալիս Ռուսաստանի պաշտպանության նախկին նախարար Պավել Գրաչովի մահվան առիթով հրապարակված՝ Ադրբեջանի պաշտպանության նախկին նախարար, Ժողձակատի ակտիվ անդամ Ռահիմ Ղազիևի հուշերը, իրականում Ռուսաստանի նոր ղեկավարությունը և անձամբ նախագահ Բ. Ելցինը տվյալ հարցի շուրջ լուրջ տատանումներ են ունեցել: Բանն այն է, որ 1992 թվականի մայիսի 15-ին՝ Տաշքենդում կայացած ԱՊՀ երկրների ղեկավարների բարձր մակարդակի հանդիպման ժամանակ փոխվել է Ռուսաստանի ղեկավարության դիրքորոշումը Ադրբեջանում արդեն տապալված Ա. Մութալիբովին կրկին իշխանության վերադարձնելու հարցի հանդեպ: Մինչ այդ Ռուսաստանում լիովին պատրաստ էր Բաքվում ռազմական հեղաշրջում կազմակերպելու և Ա. Մութալիբովին իշխանության վերադարձնելու ծրագիրը, որի իրականացման գործին մասնակցելու էին նաև դեռևս Գյանջայում (Գանձակում) գտնվող ռուսական զորամիավորումները: Եվ ահա թե ինչ խոսակցություն է տեղի ունեցել 1992 թ. մայիսի 15-ին Ռահիմ Ղազիևի և Բորիս Ելցինի միջև. «Բորիս Նիկոլաևիչ, ես ոչ միայն Ադրբեջանի պաշտպանության նախարարն եմ, այլև Ժողովրդական ձակատի վարչության անդամը: Այն ձակատի, որը Ձեր պաշտպանության դիրքերում կանգնեց օգոստոսյան խռովության օրերին: Իսկ այժմ Դուք աջակցում եք Մութալիբովին, որը «Պրավդա» թերթում Ձեզ շիզոֆրենիկ է անվանել և որը միշտ եղել է Գորբաչովի կողմնակիցը»: Եվ այդ պահին Ելցինը կարծես զգաստացավ: Նա գլուխը շրջեց իր հետևում կանգնած Գրաչովի կողմը և նետեց՝ «Թողնել»: Միայն մի քանի օր անց ես հասկացա, որ նա հրամայել է Գրաչովին չաջակցել Մութալիբովին: Ինչպես մի քանի օր անց ինձ պատմեց Գյանջայում Օդադեսանտային զորքերի 104-րդ դիվիզիայի հրամանատար գեներալ Շչերբակը, նա իր ձեռքում ուներ Գրաչովի հրամանը՝ իր դեսանտայինների հետ առաջանալ Բաքու և աջակցել Մութալիբովին: Բայց հետո Գրաչովը չեղյալ է հայտարարել իր հրամանը»⁶:

Ռուսաստանի քաղաքականության մեջ կատարված նման փոփոխության արդյունքն էր նաև նույն 1992 թվականի մայիսին Տաշքենդում ստորագրված արձանագրությունը մինչև 1994 թ. օգոստոսի 1-ը Ադրբեջանի տարածքից ռուսաստանյան զորքերի դուրսբերման մասին, որով խորհրդային սպառազինությունների բաշխման ժամանակ Ադրբեջանը ստացավ ավելին, քան նախատեսվում էր: Սրանով, ի դեմս ժամանակին Մոսկվայի Բուտիրյան բանտում «նախնական մշակում» անցած Ռահիմ Ղազիևի և Ադրբեջանի Ժողձակատին հարող մեկ այլ հավակնոտ դեմքի (Մուրաթ Հուսեյնով), ամրապնդվում էր նոր իշխանության ուժային թևը, որի միջոցով հետագայում տապալվեց Ա. Էլչիբեյը, և «կանաչ լույս» վառվեց Հեյդար

6 «Павел Грачев сказал мне: «Карабах ведь армянская территория. Ну отдайте вы её им...». Vesti.az, 25 сентября 2012.

Ալիևի առջև:

Այսպիսով՝ Ելցինյան Ռուսաստանը առերևույթ աջակցելով մինչ այդ Հայաստանում արդեն հաստատված իր համախոհ Լ. Տեր-Պետրոսյանի իշխանությանը, միաժամանակ համախոհների շրջանակ էր ձևավորում Ադրբեջանում, որի ամրապնդման համար հարկավոր էր աջակցություն նաև մարտի դաշտում: Ուստի պատահական չէ, որ Ադրբեջանի 1992 թվականի հունիսյան հարձակման գլխավոր դերակատարները մի կողմից՝ Գյանջայում տեղակայված Ռուսաստանի զորամիավորումներն էին, մյուս կողմից էլ՝ վերը նշված ադրբեջանական նորաթուխ ուժայինները: Ռահիմ Ղազիևի ռուսամետ դիրքորոշումը պաշտպանում էր Ադրբեջանում ոչ պակաս հեղինակություն վայելող Սուրաթ Հուսեյնովը, որը, լինելով Ղարաբաղի հարցով նախագահի «հատուկ ներկայացուցիչը», միաժամանակ Գյանջայում տեղակայված 23-րդ դիվիզիայի հրամանատար, գեներալ Ալ. Շչերբակի մտերիմ ընկերն էր:

Դա է պատճառը, որ տարիների հեռավորությունից բացահայտելով ողջ ծշմարտությունը՝ իր վերջին հարցազրույցում Ռ. Ղազիևը անկեղծորեն խոստովանում է. «Չմոռանաք նաև Ադդերեի (Մարտակերտ-Լ.Ս.) գործողության մասին, որն իրականացրին ռուսական դեսանտայինները: Հայերին այնտեղ մի լավ սեղմեցին: Իսկ մեզ օգնելու հրամանը նրանց տվել էր հենց Գրաչովը: Չի կարելի մոռանալ, որ այն ժամանակ մենք ազատագրեցինք նախկին ԼՂ-ի տարածքի 52 տոկոսը: Եվ դա՛ շնորհիվ ռուսաստանյան զորքերի աջակցության»⁷:

Ստացվում է, որ Ադրբեջանի պաշտպանության նախկին նախարարը Շահումյանի անկումից շուրջ 20 տարի անց անկեղծորեն խոստովանում է, որ Ղարաբաղյան պատերազմում իր երկրի միակ հաջողված խոշոր ռազմական գործողությունը՝ Շահումյանի ողջ շրջանի և ապա՝ Մարտակերտի զգալի մասի 1992 թ. բռնագավթումը, եղել է ոչ թե ադրբեջանական բանակի, այլ ռուսական զորամիավորումների հաղթանակը:

Այդ գործողությանը Ադրբեջանի կողմից ռուսական բանակի մասնակցության իրողությունը հաստատվում է բազմաթիվ փաստերով: Օրինակ՝ Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայությունը 1992 թ. հունիսին հաղորդում էր, որ «Գանձակում տեղակայված 4-րդ բանակի ազգությամբ ռուս 310 սպաներ հունիսի 1-ից ծառայության են անցել Ադրբեջանի ազգային բանակի շարքերում: Ռուս սպաների թիվը, որոնք ցանկություն են հայտնել մնալ Ադրբեջանում, շուտով կանցնի հազարից»⁸:

Կամ, մեկ այլ տվյալի համաձայն՝ հայկական ուժերի հակահարձակման արդյունքում 1992 թ. Մրխավենդի մոտ զոհված 200 ադրբեջանցի զինվորների մեծ մասը սլավոններ էին: Իսկ գերեվարված ազգությամբ ռուս սպաները խոստովանել են, որ հարձակումից մեկ ժամ առաջ նրանց խոստացվել է 15 հազար ռուբլի⁹:

Նմանօրինակ փաստերը վկայում են, որ 1992 թ. ամռանը ադրբեջանա-

7 Նույն տեղում:
8 «Ազգ», եր., 6 հունիսի, 1992 թ.:
9 http://www.lin.am/eng/region_rpolitics_2839.html

կան կողմի հաջողությունները եղել են բացառապես ռուսական զինուժի օգնության արդյունքը, չնայած որ անցած 20 տարիների ընթացքում Ադրբեջանի պաշտոնական հայտարարություններում մշտապես հերքվել է այդ փաստը:

Նույն կերպ է վարվել նաև ռուսական կողմը: Որպես ապացույց մեջբերենք ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովի 1992 թ. հունիսին արված հայտարարությունն այն մասին, որ «Ադրբեջանում տեղակայված 4-րդ ռուսական բանակը պահպանում է չեզոքություն, իսկ գերեվարված ռուս սպաները վարձկաններ են»¹⁰:

Այսպիսով՝ Ռուսաստանի պաշտպանության նախարար Պ. Գրաչովը մի կողմից հայտարարում էր, թե Ադրբեջանից դուրս են բերվում ռուսական զորքերը, իսկ մյուս կողմից Ադրբեջանին էին նվիրվում տանկային և հրետանային գնդեր՝ դրանով իսկ ռազմական գործողությունների ծավալման նոր առիթ ստեղծելով տարածաշրջանում:

Իրավապաշտպան Լ. Յունուսովան, որն այդ ժամանակ Ադրբեջանի պաշտպանության փոխնախարարն էր, այս առիթով վերհիշում է. «Ճիշտ տեղում ծախսելով փողը՝ Ադրբեջանը կարողացավ տիրանալ սպառազինությունների մեծ մասին՝ հասնելով ռազմական առավելության: Որպեսզի ռուսները մեզ տային ավելին, քան նախատեսված էր համաձայնագրով, մենք պարզապես վճարում էին դիվիզիաների հրամանատարներին»¹¹:

Շահումյանի շրջանի գրավումը Հայաստանի վերին ատյանների համար այնքան էլ անսպասելի չէր: Կրկին բախվեցինք այն տխուր փաստին, որ մեր ռազմական դաշնակցի օգնությամբ կատարվեց մեր հողերի գրավում-հանձնումը, չնայած որ Ռուսաստանի պաշտպանության նախարարության մամուլ կենտրոնը ժխտում էր Գյանջա քաղաքում տեղակայված 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի՝ Հյուսիսային Արցախի վրա գրոհին մասնակցության մասին տեղեկությունները և հայտարարում. «Ռուսաստանի Դաշնության զորքերը չեզոքություն են պահպանում և չեն մասնակցում ռազմական գործողություններին»¹²:

Մինչդեռ ստույգ տեղեկություններ կան, որ Շահումյան ներխուժած ռուսական տանկերի առաջին անձնակազմերը ժողովրդին բնաջնջելու փորձ չեն արել, այլ միայն զգուշացրել են, որ մարդիկ հեռանան ու փրկվեն, քանի որ իրենցից հետո գալու են բուն ադրբեջանական զորամասերը՝ կողոպտելու և ոչնչացնելու գրավված գյուղերը¹³:

ԼՂՀ-ի ինքնապաշտպանության ուժերի շտաբից էլ հայտնվում էր, որ տեղեկություններ ունեն Լեռնային Ղարաբաղի վրա հարձակվելու պլանի մշակմանը թուրք զինվորական մասնագետների անմիջական մասնակցության մասին: Ըստ երևույթին, պատահական չէր, որ Բաքվում Թուրքիայի զինվորական կցորդ էր նշանակվել այդ երկրի ցամաքային զորքերի կազմակերպման վարչության նախկին պետ, բրիգադային գեներալ Խալիլ Կալաբայջին¹⁴:

10 http://www.lin.am/eng/region_rpolitics_2839.html

11 Թ. դե Վասալ, նույն տեղում, էջ 280:

12 «Հայաստանի Հանրապետություն», Եր., հունիսի 18, 1992 թ.:

13 Տե՛ս Կ. Ղահրամանյան, Հյուսիսային Արցախ. Գոյության պայքար, գիրք Բ, Եր., 1993, էջ 83:

14 «Հայաստանի Հանրապետություն», Եր., հունիսի 7, 1992 թ.:

Նույնիսկ լրատվամիջոցներում հայտնվեց այն տարօրինակ լուրը, որ ադրբեջանցիները այդ դեպքերի նախօրյակին Բաքու ժամանած Ռուսաստանի պետքարտուղար Գ. Բուրբուլիսին կաշառել են և մի քանի ժամով վարձել 23-րդ դիվիզիան՝ Շահումյանի շրջանը հայաթափ անելու համար: Հարձակման ժամանակ դիվիզիան օգտագործել է իր ողջ զրահատեխնիկան՝ օդուժի աջակցությամբ գործադրելով անգամ զանգվածային բնաջնջման միջոցներ:

1992 թ. հունիսի 12-ի հարձակումից դեռևս երեք օր առաջ Հայաստանի ռազմական ղեկավարությունը հստակորեն տեղեկացվել էր Շահումյանի սահմանում գինուժի և տեխնիկայի կուտակումների մասին, բայց շրջանի պաշտպանությունն ուժեղացնելու համար որևէ քայլ չէր ձեռնարկվել: Ավելին, Շահումյանում տեղակայված պետական վաշտի հրամանատարությունը դարձյալ, գրոհից երեք օր առաջ, հրաման էր ստացել Ստեփանակերտի վրայով վերադառնալ Հայաստան: Սակայն ազատամարտիկները հրաժարվել էին¹⁵:

Մեկ այլ ազատամարտիկ, որը վիրավորվել էր հունիսի 13-ին՝ Բուզլուխում, պատմում է. արդեն հունիսի 12-ի գիշերը գիտեին, որ մեծ հարձակում է լինելու. «Մենք մի 60-70 հոգի էինք, մեզ վրա հարձակվեցին մոտ 700 հոգով: Բայց դա ադրբեջանական բանակը չէր, այլ 4-րդ բանակը՝ կարմիր բերետավորներն էին»¹⁶: Սակայն չնայած դրան՝ Շահումյանը կռվել է այնքան, որքան կարողացել է: Եվ առանց լուրջ դիմադրության հանձնվել է միայն Գյուլիստանը, որովհետև դիմադրություն կազմակերպելը բարդ խնդիր էր. այստեղ էին հավաքվել շրջանի 14 հազար բնակիչները, որոնցից 4 հազարը՝ երեխաներ: Բայց, երբ Շահումյանի շրջանի փախստական դարձած հայերը տեղափոխվեցին Ստեփանակերտ, այստեղ նրանց լավ չընդունեցին՝ անվանելով «դավաճաններ»:

Մեջբերենք 1992 թ. «Ազատամարտ» թերթում Շ. Մեղրյանի տված հարցազրույցից. «Գալով Մարտակերտի շրջան, բախվեցինք պատրաստի տարբերակի հետ՝ Շահումյանում կատարված է դավաճանություն: ...Ամեն ինչ նախապատրաստված էր. քարոզչական մեքենան սկսեց աշխատել բարձր մակարդակով և ժողովրդի մեջ մտցվեց, որ նրանք չեն կարող ոչ միայն հուսալ վերադառնալ Շահումյան, այլ նաև մնալ Ստեփանակերտում և ԼՂՀ-ում»¹⁷:

Նույնպիսի վերաբերմունքի շահումյանցիներն արժանացան նաև Երևանում: Հետաքրքիր է, որ Երևանի Լենինի հրապարակում հավաքված փախստականների հետ հանդիպումներ չունեցան ժամանակի պետական այրերը ու չարձագանքեցին նրանց ողբերգությանը: Նույնիսկ ամբողջի միջից հնչում էին վիրավորված արտահայտություններ, որ գոնե նախօրոք զգուշացնեիք, մենք ինքներս կտեղափոխվեինք¹⁸:

ՀՀ Գերագույն խորհրդի որոշումով ստեղծվեց «Շահումյանի շրջանի և Մարտակերտի շրջանի հյուսիսային հատվածի անկման պատճառներն ուսումնասիրող ՀՀ ԳԽ ժամանակավոր պատգամավորական հանձնաժո-

15 ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 756, ց. 1, գ. 113, թ. 164:

16 «Ազգ», Եր., 18 հունիսի, 1992 թ.:

17 «Ազատամարտ», Եր., հուլիսի 21-27, N 11, 1992 թ.:

18 Տե՛ս Մ. Ղազարյան, Շահումյան-Գետաշեն՝ մաքառումների հազար օր, Եր., 2007, էջ 321:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

2013 հուլիս-սեպտեմբեր, 3 (43) րոպի, թիվ 3

ՎԷՄ համահայկական հանդես

ղով»: 1992 թ. հունիսի 29-ին տեղի ունեցած նիստում հնչում են մեղադրանքներ, որ «ղեռես շրջանի անկումից 10-15 օր առաջ ԳԽ պաշտպանության և ՆԳ հանձնաժողովի անդամները այնտեղ էին և կարող էին գալ եզրակացության, որ Շահումյանում պաշտպանությունը վատ է կազմակերպված: Արդյո՞ք չկարողացան, թե՛ հարկ չհամարեցին այդ մասին զեկուցել խորհրդարանին»¹⁹:

Ինչ-որ մեկի թեթև ձեռքով անհարկի պիտակներ կայցվեցին Շահումյանի պաշտպանության հերոսին՝ Շահեն Մեղրյանին և հայրենիքը կորցրած, ողբերգություն ապրող ժողովրդին, նույնիսկ հեռուստաէկրանից մեղադրանքներ հնչեցին տարածքի դիտավորյալ հանձնման և դավաճանության մասին:

Այս առիթով 1992 թ. հուլիսի 8-ին ՀՅ Դաշնակցության կենտրոնական կոմիտեի շենքում կայացած մամլո ասուլիսում Շահեն Մեղրյանը հայտարարեց. «Դասալիքներ և դավաճաններ չեն եղել: Դա Հայաստանի ռազմաքաղաքական պարտությունն էր: Եթե Ադրբեջանը, չլինելով ԱՊՀ-ի անդամ, հասել էր այն բանին, որ մեկ անգամ ևս կարողացավ օգտագործել խորհրդային 4-րդ բանակի ուժերը մեր դեմ, ապա Շահումյանի անկումը իրոք պետք է դիտել ռազմաքաղաքական պարտություն»: Նրա պատմածներից երևում էր, որ հարձակումը այնքան հզոր է եղել, իսկ պաշտպանվելու հնարավորությունը՝ ոչ բավարար, որ միակ ելքը մնացել էր ժողովրդին տարհանելը. «Ժամանակ չկար բացատրելու՝ ինչ, ինչպես: Այստեղից էլ մեղադրանքները, որ ես շրջանը դիտավորյալ եմ հանձնել»²⁰:

Մեկ այլ հարցազրույցում Շ. Մեղրյանը շարունակում էր. «Մամուլում տարածվեց Շահումյանի հանձնման մասին տարբերակ՝ առանց մի կրակոցի: Եվ հնարավոր է, որ նման տարբերակը շրջանառության մեջ մտցվեց որպես պատասխան Լաչինի շրջանը առանց մի կրակոցի հանձնելու դիմաց: Հավանաբար, ինչ-որ քաղաքական շրջաններ պետք է արտաքին աշխարհին հայտարարեին, որ Շահումյանը հանձնվել է իրենց կողմից առանց մի կրակոցի և փոխանակումը կատարված է համերաշխորեն: ... Իսկ ժողովրդին և նրա առաջնորդներին դավաճան անվանելով՝ փորձում են կտրեն այն ամենը, ինչ միավորում է ժողովրդին: Ոչ մեկը իր վրա չի վերցնում Շահումյանի պարտության պատասխանատվությունը: Այն չգիտես ինչու չդարձավ ԼՂՀ ռազմական շտաբի պարտությունը, այլ այդ պատասխանատվությունը իր վրա վերցրեց Հայաստանի Պաշտպանության նախարարությունը»²¹:

Շահեն Մեղրյանի տվյալներով՝ հունիսի 12-ի հարձակման սկզբում հայ մարտիկներին հաջողվել էր անգամ լուրջ վնասներ պատճառել թշնամուն՝ շարքից հանելով 15-17 միավոր տեխնիկա, բազմաթիվ սպանվածներ, հիմնականում վարձկաններ, քանի որ առաջատար դիրքերում նրանք էին: Հայկական կողմի կորուստը 120 մարդ էր: Ինքնապաշտպանական ուժերը 12 ժամ շարունակ կռվել են, սակայն ոչ մի օգնություն չեն ստացել, թեև բազմիցս հեռախոսակապով հնչել է 30 տանկ ուղարկելու մասին սուտ

19 ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 207, ց. 62, գ. 217. թ. 44-45:

20 Голос Армении, Ер., 10 июля, 1992 г.

21 «Ազատամարտ», Եր., հուլիսի 21-27, N 11, 1992 թ.:

խոստումը, որն անընդհատ հետաձգվում էր՝ մինչև շրջանի անկումը²²:

Դրանից հետո նոր միայն որոշվել է տարհանել շրջանի բնակչությանը: «Շահումյանի հանձնումը քաղաքական պարտություն էր, քանի որ հայերի դեմ կռվում էր նրա դաշնակիցը: Եվ Հայաստանում, և ԼՂՀ-ում լուռ համաձայնեցին, որ Շահումյանի շրջանը, որը իբր արհեստականորեն է միացել ԼՂՀ-ին, վաղ թե ուշ պետք է դուրս գա: Դրա համար էլ մեզ չօգնեցին», - եզրակացնում էր Շ. Մեղրյանը²³:

2005 թ. տեղի ունեցած խորհրդարանական լսումների ժամանակ ելույթներ հնչեցին Արցախի հյուսիսային շրջանների հանձնման և դրանց հետագա ճակատագրի, Շահումյանի շրջանում ընթացող բնակեցումների մասին²⁴: Խանլարի շրջանի տարածքով ընթացող Բաքու-Ջեյհան նավթամուղի շինարարությունն իրականացվեց Արևմուտքի նավթային ընկերությունների միջոցներով: Ճիշտ է, այն չի անցնում հայկական գյուղերով, սակայն սահմանակից է նրանց: Այդ պատճառով՝ ապահովելու համար նավթամուղի շինարարության անվտանգությունը, հարկավոր էր դատարկել հայկական գյուղերը:

Այսպիսով՝ շուրջ 20 տարվա հնություն ունեցող ողբերգական իրադարձությունների ժամանակ հակառակորդ ճամբարներում գտնված հայ և ադրբեջանցի մասնակիցների **միմյանց համընկնող** խոստովանությունները բացահայտում են Շահումյանի շրջանի անկումով ամբողջացած՝ Հյուսիսային Արցախի հայաթափման իրական պատճառները: Արդյունքում՝ ապացուցված պատմական փաստերի արժեք են ձեռք բերում Շահումյանի գործողությանը Ռուսաստանի զինված ուժերի անմիջական մասնակցության և այդ մեծ ողբերգությանը Հայաստանի ՀՀՇ-ական իշխանությունների քողարկված մեղսակցության իրողությունները:

Summary

THE MYSTERY OF THE FALL OF SHAHUMYAN By the light of new facts and evidences

Lusine M. Sargsyan

During the last two decades the question of the loss of Shahumyan region is was always timely, so many articles have been written, books have been published, there were many opinions expressed. By this article the new facts and evidences are presented, which concern the loss of Shahumyan and have been found out after the war of Nagorno-Karabakh with the help of the Armenian and Azeri participants of the struggle. The coinciding confessions of the participants from two sides prove and discover the real reasons of the suppressions of Armenians from the northern parts of Nagorno-Karabakh.

22 Տե՛ս Վազգեն Սարգսեանի գրութիւնը Շահէն Մեղրեանին, յունիսի 25, 1992: Ֆոտոպատճենը՝ Աշոտ Պետրոսեան, Մեծն Շահէն, Եր., 2011, էջ 384-ին հաջորդող լուսանկարները:

23 Տե՛ս նոյն տեղում:

24 Այս մասին տե՛ս «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ. խորհրդարանական լսումներ», Եր., 2006:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) համիս-մեկտրեքեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես